

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«-----» ----- 2018թ.

N--- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի N 87-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքի 6-րդ հարկից «Անդին-Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված, համապատասխանաբար 52.4 քմ և 61.9 քմ մակերեսներով տարածքների անհատույց օգտագործման պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնել երկու տարի ժամկետով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

S. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 6-րդ հարկից «Անդին-Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված 52.4քմ և 61.9քմ մակերեսներով տարածքների անհատույց օգտագործման պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնել երկու տարի ժամկետով:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02082016-01-0176 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Նշված շենքի 6-րդ հարկի 52.4 քմ և 61.9 քմ մակերեսներով տարածքները Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 10-ի հ.485-Ա և 2014 թվականի մարտի 19-ի հ.143-Ա որոշումների հիման վրա, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել են «Անդին-Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Որոշումների հիման վրա ընկերության հետ կնքվել են գույքի անհատույց օգտագործման պայմանագրեր, որոնցից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում: Նշված պայմանագրերի գործողության ժամկետներն ավարտվել են և ներկայումս ընկերությունը դիմել է Երևանի քաղաքապետարան զբաղեցրած տարածքների նկատմամբ օգտագործման իրավունքի ժամկետները երկարաձգելու խնդրանքով:

«Անդին-Ա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գունավոր տպագրությամբ հրատարակվում է «Անդին» վերնագրով գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիր, որի նպատակը հասարակության համար գրական, գեղարվեստական, փիլիսոփայական, հոգեբանական, սոցիալական և քաղաքական միտքն արտահայտելու ազատ դաշտ ձևավորելն է:

Հաշվի առնելով ընկերության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը մեր հասարակության համար, ընկերության հիմնադիր և տնօրեն Մերուժան Տեր-Գուլանյանի ունեցած բարձր հեղինակությունն ու բազմամյա աշխատանքային փորձը Հայաստանի մշակույթի, մամուլի, հասարակական և քաղաքական բնագավառներում, ինչպես նաև համանման դեպքերում ձևավորված մոտեցումը՝ նպատակահարմար է գտնվել առաջարկել Երևանի ավագանուն՝ երկարացնել զբաղեցված տարածքների օգտագործման ժամկետները ևս երկու տարով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ